ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, 055 22 00 85 kanachutgp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 22

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով՝

Կանաչուտ համայնքի վարչական տարածքում 2014թ. համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

Հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգե գործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

2) սույն կետի ա)ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 /տասնհինգ հազար/ դրամ ,

բ) 501-1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 /քսանհինգ հազար/ դրամ,

գ)1001քմ -3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝20000 / քսան հազար/ դրամ.

դ) 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 / երեսուն հինգ հազար /դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման

աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարության, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար յուրաքանչյուր քառակուսի մետրը 200 դրամ.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 դրամ:

3)խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների, բաղնիքների (սաունաների), խաղատների՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 1000.000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ, կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար՝ 0 դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանում է 0 դրամ:

1,2,3 կետերի համար կիրառված է 0.5 գործակից:

Վճարներ

Համայնքի սահմաններում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ վճարները

1. համայնքի տարածքում շինարարության կամ արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական շինարարության ավարտը

փաստագրելու տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայության դիմաց հատուցման վճար՝ 1000 դրամ:
2. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման մասնակիցներից վճար 500 դրամ:
3. համայնքում աղբահանություն կազմակերպելու համար յուրաքանչյուր բնակչի համար 5 դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, 055 22 00 85 kanachutgp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 23

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով՝

Հաստատել գույքագրման արդյունքները և բոլոր ենթակառույցների գույքը թողնել հետագա գործունեության համար.

Մանկապարտեզ՝
1. Դաշնամուր-1հատ
2. Մահճակալ տումբա-8հատ
3. Կշեռք-1հատ
4. Ալյումինե պղինձ-3հատ
5. Սրբիչի կախիչ-2հատ
6. Մանկական սեղան-12հատ
7. Գրասեղան-1հատ
8. Սպիտակեղենի կոմպլեկտ-30հատ
9. Վերարկուների պահարան-2հատ

Մշակույթի տուն/գրադարան -1. Վարագույր/պատրաստի/4հատ
2. Բեմի վարագույր -1հատ
3. Քիվ-7հատ
4.Սեղան 1x173,25
5. Երկաթյա պահարան 10x88,55=885,50
6. Երկաթյա պահարան 16x184=2944
7. Երկաթյա պահարան 4x17,20=68,80
8. Գրականություն-6393կտոր
9.Դաշնամուր- 1հատ
10. Նստարան-25հատ

Գյուղապետարան
1. Համակարգիչ -2հատ
2. Մոնիտոր LG- 2հատ
3. Տպիչ- 1հատ
4. UPS-LHTEX-2հատ
5. Գրասեղան-6հատ

6. Սեղան-1հատ
7. Չիրկիզվող պահարան-5հատ
8. Կողասեղանիկ-2հատ
9. Աթոռներ- 6հատ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ԱՍԱՏՐՅԱՆ**